

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ՀԱՅԱՍՏԱՆ

Կատարման եվրոպական ցանց
2021 թվականի հունվար

Կատարման եվրոպական ցանցը համագործակցում է ՀԿ-ների և եվրոպական այլ կազմակերպությունների հետ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների լիարժեք և ժամանակին կատարումը խթանելու ուղղությամբ:

ՄԻԵԴ վճիռների կատարման ուղղությամբ ամենահաջող փորձը համախմբում է ազգային մակարդակում պաշտպանությունը և Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի վերահսկողական գործընթացիում ներգրավվածությունը:

ԿԵՑ-ն աջակցում է երկու մակարդակում էլ՝ աշխատանքներին պաշտպանության, դասընթացների և ռեսուրսների միջոցով:

© Կատարման եվրոպական ցանց
Ռենե Կասսին 2 ծառուղի, F- 67000 ՍՏՐԱՍԲՈՒՐԳ, ՖՐԱՆՍԻԱ
contact@einnetwork.org

Հեղինակ՝ Մատեո Զամբոնի
Գաղափարը՝ Ջորջ Ստաֆորդ և Լոանա Իլիեսկու
Կազմի լուսանկարը՝ Արտակ Պետրոսյան, **վերցված** Unsplash.com-ից
Վերջին էջի լուսանկարը՝ Գոռ Դավթյան, **վերցված** Unsplash.com-ից

Սույն փաստաթղթում նշված վիճակագրական տվյալները վավեր են եղել 2020 թվականի նոյեմբերի 27-ի դրությամբ: Տվյալները վերցվել են Եվրոպայի խորհրդի կատարման գործընթացի վերաբերյալ **HUDOC-EXEC** տվյալների շտեմարանից նշված ամսաթվին:

Հրատարակված է 2021 թվականի հունվարին

ՆԱԽԱԲԱՆ

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներն արդարացիորեն համարվում են մարդու իրավունքների խախտումների զոհերի նկատմամբ արդարադատություն հաստատելու փորձ: Այնուամենայնիվ, այն միայն մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված առաջին քայլն է: Դժբախտաբար, վճիռները կարող են կատարման սպասման փուլում մնալ շատ երկար ժամանակ: Սա ենթադրում է, որ մարդու իրավունքների խախտումները շարունակվում են: ԿԵՑ-ը նպատակ ունի ընդգծել այդպիսի օրինակները՝ գնահատելով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների կատարման փորձը: Այդ կերպ մենք հույս ունենք բարձրացնել իրազեկվածությունը և խթանել կառավարություններին և առավել լայն քաղաքացիական հասարակությանը՝ ակտիվ դերակատարություն ունենալու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման գործընթացում:

Սույն զեկույցն անդրադառնում է Հայաստանում կատարման գործընթացի արձանագրած արդյունքներին: Այն ներկայացնում է որոշակի դրական զարգացումներ, ներառյալ՝ կառավարության հաշվետվողականության մակարդակի զգալի աճը:

Այնուամենայնիվ, զեկույցը ցույց է տալիս նաև բարելավումների անհրաժեշտությունը: Ներկայումս կան 19 ակնառու վճիռներ, որոնք սպասում են կատարման: Վերջին 10-ը տարվա ընթացքում առաջատար գործերի 47%-ը մնում է չկատարված: Դրանցից յուրաքանչյուրը ներկայացնում է մարդու իրավունքների համակարգային և կրկնվող խնդիր, որին դեռևս արդյունավետ լուծում չի տրվել: Սա նշանակում է, որ անհետանում են ներպետական օրենսդրությունը, քաղաքականությունն ու գործելակերպը մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու հնարավորությունները, մինչդեռ մարդու իրավունքների խախտումները շարունակում են նորից ի հայտ գալ: Հավաքների ազատությունը, բանտերում բժշկական օգնության տրամադրումը և սեփականությունից զրկելու համար արդարացի փոխհատուցումը ոլորտներ են, որոնք պահանջում են միջոցառումներ ձեռնարկել:

Եվրոպայի խորհրդի մյուս անդամ երկրների օրինակով մենք տեսել ենք, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման համակարգային գործընթացը ձեռք է բերվել հզոր ինստիտուցիոնալ կառույցների միջոցով: Մեր փորձը ցույց է տվել նաև, որ ներգրավվածության մեծացումը և ազգային իշխանությունների և քաղաքացիական հասարակության միջև շարունակական համագործակցությունը կարող են նշանակալի առաջընթացի հանգեցնել՝ ճանաչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռները որպես մարդու իրավունքների պաշտպանություն: Հուսով ենք, որ սույն զեկույցի տարածումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում վճիռների կատարման գործընթացի հետագա աշխատանքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացմանը:

Պրոֆեսոր Բասակ Կալի,
ԿԵՑ նախագահ

ԻՆՉՈՎ Է ԿԱՐԵՎՈՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ «*Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի*» գործը և խաղաղ ցույցերի իրավունքի պաշտպանությունը

Պարոն Սաղաթելյանը քաղաքական գործիչ է, ով աջակցում էր 2008 թվականի նախագահական ընտրություններում պարտված թեկնածուին, դուրս էր գալիս Երևանի փողոցներ՝ միանալով Ազատության հրապարակում հավաքված մյուս ցուցարարներին և նրանց հետ միասին դատապարտում համատարած անկարգությունները: Բողոքի ակցիան հանգեցրեց իրավապահ ուժերի հետ բախումների: Այսպիսի հանգամանքներում պրն. Սաղաթելյանին բռնել են ոստիկանական ուժերը և բերման են ենթարկել հենց այդ գիշեր: Ի վերջո, նրա դեմ պաշտոնական մեղադրանք է առաջադրվել, այնուհետև նա պաշտոնապես ձերբակալվել է և նրա նկատմամբ նախնական կալանք է նշանակվել: **Դրանից անմիջապես հետո մեղադրանքը հանվել է, բայց պրն. Սաղաթելյանին ազատ արձակելու փոխարեն, իշխանությունները նոր մեղադրանքներ են առաջադրել, նրա նկատմամբ նախնական կալանքը երկարացվել է, նրան մեղավոր են ճանաչել** և **դատապարտել են 5 տարվա ազատազրկման:**

Վարույթի ողջ ընթացքում պրն. Սաղաթելյանը պնդել է, որ մեղադրանքները շինծու են և հայտարարել է, որ ինքը կամայական հետապնդման զոհ է դարձել: Նա նաև բողոքել է, որ կալանավորված լինելու ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից ծեծի է ենթարկվել: Այնուամենայնիվ, նրա պնդումները մնացել են անպատասխան, քանի որ դրանց առնչությամբ պաշտոնական հետաքննություն չի սկսվել: Ի վերջո, նրա իրավունքները պաշտպանվել են Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից: Այնուամենայնիվ, **Հայաստանում իրավունքների պաշտպանության առնչությամբ բարեփոխումները դեռ շարունակվում են: Բարեփոխումները գնահատվում են Եվրոպական դատարանի վճիռների կատարման համար նախատեսված ԵԽ վերահսկողության ընթացակարգով:** Պրն. Սաղաթելյանի գործն առանձնացվել է որպես առաջատար վճիռ 2008 թվականի բողոքի ակցիաները ճնշելու վերաբերյալ մի խումբ գործերի շարքից:

Կոնվենցիաների համակարգը կարող է զգալիորեն փոխել մարդկանց կյանքը և դրական փոփոխություններ մտցնել ողջ մայրցամաքում

(Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար, 2020 թվականի սեպտեմբերի 4, DC 106 (2020))

Քրիս Սլուպսկի, վերցված Unsplash.com-ից

Նախարարների կոմիտեին ուղղված իրենց գործողությունների ծրագրում Հայաստանի իշխանությունները նշել են, որ ՄԻԵԴ-ի կողմից սահմանված արդարացի փոխհատուցումը վճարվել է դիմումատուին, որ նրա դեմ քրեական գործը վերսկսվել է, և նրա դատավճիռը չեղյալ է հայտարարվել: Ինչ վերաբերում է ընդհանուր միջոցառումներին, կառավարությունը մատնանշել է մի քան **օրենսդրական նախաձեռնություններ** (ներառյալ՝ 2015 թվականի սահմանադրական բարեփոխումը, **խոշտանգման հանցագործության ներդրումը ներպետական օրենսդրության մեջ** և օրենսդրական դաշտի՝ հավաքների ազատությանն առնչվող փոփոխությունները): Բացի այդ, Հայաստանում ստեղծվել է **անկախ պետական մարմին (Հատուկ քննչական ծառայությունը)**:

Այնուամենայնիվ, ՀԿ-ները պնդում էին, որ այդ միջոցառումները բավարար չեն մարդու իրավունքների՝ ՄԻԵԴ-ի կողմից հայտնաբերված բարդ խնդիրները լուծելու կամ կրկնվող խախտումներից խուսափելու համար: **Նախարարների կոմիտեն հաշվի է առել ինչպես կառավարության, այնպես էլ ՀԿ-ների տեսակետները,** և իր 2020թ. որոշմամբ ողջունել է իշխանությունների կողմից ձեռնարկված դրական քայլերը, բայց այնուամենայնիվ նրանց հորդորել է վերջնական տեսքի բերել նախատեսված օրենսդրական նախաձեռնությունները և շարունակել իրականացնել վճռական գործողություններ՝ մնացած խնդիրները լիարժեք հաղթահարելու համար:

ԻՆՉՈՎ Է ԿԱՐԵՎՈՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
Ինչպես է իրականացվում կատարման գործընթացը

Սաղաթելյանին առնչվող գործերի խմբի կատարումը կարելի է դիտարկել որպես կատարման գործընթացի բարդ բնույթը, ինչպես նաև կառավարության, Եվրոպայի խորհրդի և քաղաքացիական հասարակության միջև տեսակետների փոխանակման կարևորությունն ընդգծող օրինակ:

ՄԻԵԴ վճիռը

2018 թ. սեպտեմբերի 20-ի վճռով ՄԻԵԴ-ը գտավ, որ պրն. Սաղաթելյանի՝ **5-րդ հոդվածով** նախատեսված իրավունքները խստորեն խախտվել են՝ հաշվի առնելով նրա **չհայտարարված կալանավորումը:** Բացի այդ, ՄԻԵԴ-ը հայտնաբերել է **3-րդ հոդվածի խախտում՝** դիմումատուի կողմից վատ վերաբերմունքի վերաբերյալ բողոքները քննության չառնելու առնչությամբ, **6-րդ հոդվածի խախտում՝** նրա՝ պաշտպանվելու իրավունքի նկատմամբ չափազանց շատ սահմանափակումների կիրառման առնչությամբ, և **11-րդ հոդվածի խախտում՝** խաղաղ ցույցերը բռնի կերպով ցրելու և մասնակիցներին բերման ենթարկելու առնչությամբ:

ԵԽ-ի և այլ միջազգային կազմակերպությունների ներգրավվածությունը

ԵԽ-ն և միջազգային այլ կազմակերպություններ շատ ակտիվ դերակատարություն են ունեցել այս խմբի գործերի կատարման գործընթացում: Վենետիկի հանձնաժողովը եզրակացություն է պատրաստել 2015թ. սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ, իսկ Խոշտանգումների դեմ կոմիտեն և Խոշտանգումների կանխարգելման եվրոպական կոմիտեն դրական գնահատական են տվել խոշտանգումների հանցագործությունը ներկայացնող ներպետական օրենսդրությանը: Այս խմբի գործերի կենտրոնում գտնվող մարդու իրավունքների հիմնահարցին նաև անդրադարձ է կատարվել Հայաստանի 2020թ. ՀՊԳ (Համընդհանուր պարբերական գնահատում) շրջանակներում: Ավելին, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը վերջերս ողջունել է իշխանությունների՝ հավաքների ազատության երաշխավորմանն ուղղված ջանքերը: Վերջապես, այս խմբի գործերի կատարման համար ձեռնարկվելիք միջոցառումները ներառվում են ԵԽ՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2019-2022թթ. ծրագրի շրջանակների մեջ:

Կառավարության կողմից ընդունված միջոցառումները

2020թ. ապրիլի 2-ի գործողությունների ծրագրով իշխանությունները պարտավորվել են թիրախավորված միջոցառումներ ձեռնարկել ՄԻԵԴ-ի կողմից հայտնաբերված խախտումները վերացնելու և հետագայում նմանատիպ խախտումները կանխելու ուղղությամբ: Ի թիվս այլ միջոցառումների, Հայաստանը **2015թ.** ընդունել է **սահմանադրական փոփոխություններ**, **ներդրել է խոշտանգման հանցագործությունը, բարեփոխումներ է իրականացվել հավաքների ազատությանն առնչվող օրենսդրական դաշտում** և ստեղծել է հատուկ քննչական ծառայությունը: Բացի այդ, կառավարությունը պարտավորվել է իրականացնել քրեական դատավարության օրենսգրքի ընդհանուր բարեփոխում:

Տեղական ՀԿ-ների դերը

Իշխանությունների գործողությունները մանրազնին կերպով ուսումնասիրվել են ՀԿ-ների կոալիցիայի կողմից, որը ներկայացրել է 9.2 Կանոնի վերաբերյալ միջնորդություններ՝ ընդգծելու, որ, չնայած որոշ դրական ձեռքբերումների, (**i**) **ոստիկանական ուժերի կողմից վատ վերաբերմունքը դեռևս քրեականացված չէ,** (**ii**) **քրեական օրենսգիրքը նախկինի պես նախատեսում է վաղեմության ժամկետի կիրառում խոշտանգումների մեղադրանքների մասով**, (**iii**) **ՀՔԾ ստեղծումը չի փոխել հետաքննությունների անցկացման պրակտիկան**, և (**iv**) չնայած հավաքների ազատության մասին նոր օրենսդրության ընդունմանը՝ **կապված վերջին ցույցերի հետ՝ տեղի են ունեցել բռնության դեպքեր**:

Նախարարների կոմիտեի կողմից իրականացվող վերահսկողությունը

Նախարարների կոմիտեն 2020թ. հունիսի 4-ի իր որոշման մեջ ողջունել իշխանությունների ձեռնարկած գործողությունները, սակայն կոչ է արել նրանց վերջնականապես ավարտել նոր օրենսդրական դաշտի ընդունումն առանց լրացուցիչ ձգձգումների՝ ՄԻԵԴ-ի և մասնավորապես ՄԻԵԴ-ի կողմից հայտնաբերված խնդիրները լիարժեք հաղթահարելու համար, մասնավորապես՝ քրեական դատավարության նոր օրենսգիրքը:

ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
Հիմնական ցուցանիշները (1)

Առաջատար վճիռների թիվը, որոնք սպասում են կատարման

19

2020 թվականի նոյեմբերի դրությամբ ՄԻԵԴ-ի՝ Հայաստանի դեմ կայացված վճիռների զգալի մասը դեռևս կատարման սպասման գործընթացում է: Սա նշանակում է, որ **մարդու իրավունքների վերաբերյալ վճիռների արդյունքում վեր հանված խնդիրները դեռևս լուծում չեն ստացել** և հետևաբար, կա հավանականություն, որ դրանք կկրկնվեն:

Առաջատար գործերի՝ սպասման մեջ գտնվելու միջին ժամանակահատվածը

3 տարի 11 ամիս

Յուրաքանչյուր առաջատար վճռի սպասման միջին **ժամանակահատվածը** բավականաչափ երկար է: Այնուամենայնիվ, կան **յոթ** առաջատար վճիռներ, որոնք գտնվում են կատարման սպասման գործընթացում **ավելի քան հինգ տարի:** Դրանք առանձնացնում են լուրջ խնդիրներ, ինչպիսիք են խոշտանգումները և ապօրինի կալանավորումը:

Առաջատար վճիռներն այն վճիռներն են, որոնք բացահայտում են երկրում գոյություն ունեցող **նշանակալի կամ համակարգային նոր խնդիր:** Հետևաբար, յուրաքանչյուր առաջատար վճիռ ներկայացնում է մարդու իրավունքներին վերաբերող որևէ խնդիր, որը պետք է լուծվի կատարման գործընթացի միջոցով:

Կատարման գործընթացում գտնվող առաջատար վճիռների մասնաբաժնի գնահատումը լավ միջոց է՝ պարզելու, թե արդյոք տվյալ երկիրն անցկացնում է ընդհանուր բարեփոխումներ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված վճիռներն ուժի մեջ մտցնելու համար:

Անհրաժեշտ է նաև դիտարկել **կատարման սպասման գործընթացում գտնվող գործերի ընդհանուր թիվը:** Կատարման գործընթացի ձախողման ամենալուրջ խնդիրներ ունեցող երկրներում առկա է ինչպես առաջատար գործերի բարձր մասնաբաժին, **այնպես էլ** սպասման գործընթացում գտնվող առաջատար գործերի ընդհանուր մեծ թվաքանակ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
Հիմնական ցուցանիշներ (2)

Վերջին 10-ը տարվա ընթացքում Հայաստանի դեմ կայացված առաջատար վճիռների **գրեթե կեսը սպասում է լիարժեք կատարման**: Սա նշանակում է, որ երկրում վերջին շրջանում **մարդու իրավունքների վերաբերյալ ՄԻԵԴ-ի կողմից հայտնաբերված համակարգային հիմնախնդիրների** գրեթե 50%-ը պատշաճ լուծում չի ստացել: **Այս վճիռներում ՄԻԵԴ-ի կողմից նշված ընդհանուր օրենսդրական և/կամ քաղաքական բարեփոխումների** բացակայության դեպքում առկա է հավանականություն, որ խախտումները կարող են կրկնվել:

Վերջին 10-ը տարիների առաջատար վճիռների թվաքանակը, որոնք դեռևս սպասման գործընթացում են



Կատարված Չկատարված

Առաջատար վճիռների տոկոսը՝ ժամկետանց Գործողությունների ծրագրի/Գործողությունների զեկույցի հետ միասին



Գործողությունների ծրագիրը/Գործողությունների զեկույցը ներկայացվել է

Գործողությունների ծրագիրը/Գործողությունների զեկույցը ժամկետանց է

Ընդհանուր առմամբ դիտարկելով սպասման գործընթացում գտնվող առաջատար վճիռները՝ հարկ է նշել, որ դեպքերի մեկ երրորդից ավելիի պարագայում ՀՀ կառավարությունը դեռևս չի ներկայացրել **Գործողությունների ծրագիր** (այսինքն՝ փաստաթուղթ, որում նշված է, թե ինչ քայլեր են նախատեսվում վճիռը կյանքի կոչելու համար) և/կամ **Գործողությունների զեկույց** (այսինքն՝ հաջողությամբ ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ ակնարկ): Սա կատարման գործընթացին ուղղված խոչընդոտ է, քանի որ Գործողությունների ծրագրի և/կամ Գործողությունների զեկույցի բացակայությունը ենթադրում է կառավարության անգործություն՝ կատարման գործընթացի առնչությամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
Խախտման տեսակը

Բացի կատարված/չկատարված առաջատար վճիռների տոկոսից՝ կարևոր է նշել նաև Եվրոպական դատարանի կողմից կատարման սպասման գործընթացում գտնվող առաջատար վճիռների միջոցով հայտնաբերված **խախտման (խախտումների) բնույթը**:



Կրկնվող խախտումներ

Ուշագրավ հիմնախնդիր է **ազատության** և **անվտանգության** իրավունքի ոտնահարումը, որը շարունակաբար հանդիպում է **4 տարբեր առաջատար գործերում**: Հիմնախնդիրների թվում են **չհայտարարված կալանավորումը**, **նախնական կալանք** նշանակելու որոշման և/կամ այն երկարաձգելու համար բավարար և համապատասխան պատճառների բացակայությունը, **կամայական ձերբակալումը ֆ քրեական հետապնդումը**:

Կատարման սպասման գործընթացում գտնվող առաջատար վճիռներում բացահայտվել է 3-րդ հոդվածի (**խոշտանգումների** և **վատ վերաբերմունքի արգելք**) խախտման **5 բացահայտված դեպք**, այդ թվում՝ ոստիկանության կողմից **վատ վերաբերմունքը, կալանավորման համար անբավարար պայմանները** և բանտերում **պատշաճ բժշկական օգնության բացակայությունը**:

Արդար դատաքննության իրավունքի ոտնահարման վերաբերյալ բացահայտված դեպքերը (**առկախ 7 առաջատար գործերում**) վերաբերում են ինչպես քաղաքացիական, այնպես էլ քրեական գործերին: Դրանց թվում են մեղադրյալի պաշտպանության իրավունքի ոտնահարումը, վերջնական դատավճիռների կատարման ձախողումը և կողմերի հավասարության սկզբունքի խախտումը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՄԻԵԴ-ի կատարման գործընթացի պատկերը (1)

Ճիշտ պայմաններում իրականացվելիս **կատարման գործընթացը կարող է նպաստել Հայաստանում դրական բարեփոխումների**՝ հանգեցնելով մարդու իրավունքների իրական պաշտպանության: Այս երկրի ցուցանիշն ավելի լավն է, քան տարածաշրջանի շատ այլ երկրներինը:

Այնուամենայնիվ, **որոշ տվյալներ մտահոգության պատճառ են դառնում**: Ցավալի է, որ վերջին տասը տարվա **առաջատար վճիռների գրեթե կեսը** դեռ սպասում է կատարման: Հատկանշական է նաև, որ կան յոթ առկախ առաջատար վճիռներ, որոնք **ավելի քան հինգ տարվա վաղեմություն** ունեն:

Կարևոր է հաշվի առնել, որ Հայաստանի իշխանությունները **մեծացնում** են ջանքերը՝ արձագանքելու կատարման սպասող առաջատար գործերի խնդրին: 2020 թվականին Նախարարների կոմիտեի առջև **կառավարության հաշվետվողականության զգալի աճ** է գրանցվել: Գործողությունների զեկույցների և գործողությունների ծրագրերի քանակը **գրեթե հինգ անգամ ավելացել է**՝ համեմատած 2019 և 2018 թվականների հետ: Կառավարությունը մեծացրել է մարդու իրավունքներին, այդ թվում՝ խոշտանգման հիմնախնդիրներին, հավաքների ազատությանը և արդար դատավարությանն առնչվող վճիռների կատարման վերաբերյալ հաշվետվողականությունը:



ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՄԻԵԴ-ի կատարման գործընթացի պատկերը (2)

Հաշվետվողականության մակարդակի բարձրացումը կարևոր նշանակություն ունի կատարման գործընթացի խթանման համար: Իշխանությունների ջանքերը **միանգամայն ողջունելի** են: Պետք է նաև նշել, որ հաշվետվողականությունն արդյունավետ է միայն այն դեպքում, երբ նկարագրված միջոցառումները բավարար են հիմնախնդիրները լուծելու համար, իսկ բարեփոխումներն արդյունավետորեն իրականացվում են: **Քաղաքացիական հասարակությունը բացահայտ կերպով չի համաձայնել** կառավարության կողմից առաջարկված որոշ միջոցառումների, 9-րդ Կանոնի վերաբերյալ ԵԽ-ին ուղղված մի շարք հաղորդագրություններում: Այնուամենայնիվ, մինչ այժմ այդ տեսակետների մեծ մասն իշխանությունները չեն ընդգրկել իրենց գործողությունների ծրագրերում:

Եթե չապահովվի քաղաքացիական հասարակության մասնակցությունը կատարման գործընթացի բարեփոխումներին, դա **կթուլացնի ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը:** Քաղաքացիական հասարակության ընթացիկ առարկությունները նաև կարող են **կանխել կատարման գործընթացի դադարեցումը մի շարք գործերի համար՝** երկարացնելով նրանց կատարումը և հանգեցնելով, որ որոշ գործերի վերահսկողական գործընթացը **երկար ժամանակ** բաց մնա:

Եվրոպայի խորհրդի անդամ մյուս երկրների փորձը ցույց է տվել, որ նշանակալի առաջընթաց կարելի է ձեռք բերել **ուժեղ ինստիտուցիոնալ կառույցների** ստեղծման միջոցով, **որոնք պատասխանատու են կատարման գործընթացի վերահսկողության համար** և հիմնված են քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, կառավարման մարմինների և/կամ ազգային օրենսդիր մարմնի միջև համագործակցային հարաբերությունների և կառուցողական ներգրավվածության վրա: Նմանատիպ կառույցները լավագույնս արդյունավետ են գործում այն դեպքում, երբ կազմված են կառավարության տարբեր ներկայացուցիչներից (նախարարություններ, պետական գործակալ, Օմբուդսմենի գրասենյակ), ինչպես նաև քաղաքացիական հասարակությունից և անկախ փորձագետներից:

Հաշվի առնելով **Հայաստանի իշխանությունների և քաղաքացիական հասարակության** կողմից ՄԻԵԴ-ի կատարման գործընթացում ներգրավվելու **ջանքերի մեծացումը՝** նման ինստիտուցիոնալ կառույցի ստեղծումը կարող է մեծապես նպաստել համագործակցության և Հայաստանի կատարման ցուցանիշի բարելավմանը:

ԳՈՐԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (1)
Կալանավորվածների՝ պատշաճ բուժում ստանալու իրավունքը

Պարոն Հարությունյանը 2004թ. մեղավոր էր ճանաչվել խարդախության և այլ իրավախախտումների մեջ, **դատական նիստի ավարտին դատարանի դահլիճում նա գտնվում էր մետաղական ճաղավանդակի մեջ այն դեպքում, երբ չկար նախնական կալանք նշանակելու որոշում**: Նա 7 տարվա ազատազրկման է դատապարտվել «Կոշ» բանտում, որտեղ, չնայած իր բժշկական քարտի առկայությանը, **չի ապահովվել նրա հիմնական բուժումը, առավել յս հիվանդանոց տեղափոխումը**: Սրտի իր առաջին կաթվածից հետո նա դիմում է ներկայացրել ՄԻԵԴ՝ նշելով 3-րդ Հոդվածի բազմակի խախտումների մասին, այն է՝ մետաղական վանդակում պահելը և ոչ պատշաճ բժշկական օգնության տրամադրումը: **Վճռի կայացման ժամանակ դիմումատուն արդեն մահացել էր սրտի երկրորդ կաթվածի պատճառով:**

Կալանավորման ոչ համարժեք պայմանները տարածված խնդիր է Հայաստանում: Ի պատասխան, իշխանությունները խոստացել են **լայնածավալ միջոցառումներ** ձեռնարկել՝ ԵՄ-ի և ԵԽ-ի հետ համատեղ, ներառյալ՝ պետական պաշտոնյաների համար դասընթացների մեկնարկը, քրեական օրենսգրքի, քրեական դատավարության օրենսգրքի բարեփոխումը և կալանավորման ընթացքում բժշկական օգնության տրամադրման կանոնակարգումը՝ ի թիվս բանտերի կառավարման թափանցիկության բարձրացմանն ուղղված այլ նախաձեռնությունների (այդ թվում՝ կայքէջի ստեղծումը): Բացի այդ, **դատարանի դահլիճներում արգելվեց մետաղական ճաղավանդակների օգտագործումը, սկսեցին կառուցվել նոր կալանավայրեր յ թույլատրվեցին այցելությունները Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից (ՄԻՊԳ) դեպի բանտ:**

դիմումատուն ակնհայտորեն կանոնավոր բժշկական օգնության և հսկողության կարիք է ունեցել, ինչից, սակայն, զրկված է եղել երկար ժամանակ:

(Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի, 2010 թվականի հունիսի 15, § 115)

Դենի Մյուլլեր, **վերցված** Unsplash.com-ից

Ինչպես նշվել է Նախարարների կոմիտեի կողմից, դա բավարար չէ **խնդրի արմատական պատճառների կարգավորման համար. այսինքն՝ վատ վերաբերմունքի դեմ ներպետական միջոցի բացակայությունը:** Կառավարությունը համաձայնել է պահպանել բանտերի առողջապահության խնդիրը որպես հիմնական գերակայություն և պարտավորվել է, ի թիվս այլ գործողությունների, իրականացնել նախատեսված միջոցառումները՝ ավարտին հասցնելով օրենսդրական բարեփոխումները և ավելացնելով բանտերում աշխատող բժիշկների ու բուժաշխատողների թվաքանակը: Ավելին, իշխանությունները որոշ տեղեկություններ են հաղորդել առկա ներպետական միջոցների վերաբերյալ և հայտարարել են Քրեակատարողական բժշկության նոր կենտրոն ստեղծելու մասին: Այնուամենայնիվ, ինչպես առաջարկվում է ՆԿ-ի կողմից, առանց մանրամասն ժամանակացույցի այս միջոցառումները հետաձգման վտանգի տակ են դնում իրական փոփոխությունները: Այս մտահոգություններին արձագանքել է ՄԻՊԳ-ը, որը հատուկ առաջարկություններ է ներկայացրել բանտային հիմնարկներում առողջապահական ոլորտի աշխատակիցների և առկա սարքավորումների վերաբերյալ:

Իշխանությունները 2020 թվականին ներկայացրել են գործողությունների նոր զեկույց: Այնուամենայնիվ, ըստ տեղական ՀԿ-ների՝ շատ ավելին պետք է արվի, քանի որ Հայաստանի բանտերում առողջապահության ոլորտը դեռևս խնդրահարույց է:

ԳՈՐԾԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ (2)
Պաշտպանություն սեփականազրկումից

Օսմանյան-Ամիրագյան ընտանիքն ապրում և զբաղվում էր գյուղատնտեսությամբ Թեղուտ գյուղում իրենց պատկանող փոքրիկ հողակտորում, մինչև որ **հանքարդյունաբերական նպատակով մի մեծ ընկերություն բռնագրավեց նրանց ունեցվածքը:** Ներպետական դատավարության արդյունքում ազգային դատարանները հողը գնահատեցին մոտավորապես 500 եվրոյին համարժեք դրամ՝ **առանց հաշվի առնելու այն փաստը, որ այդ հողն ընտանիքի հիմնական, եթե ոչ միակ եկամտի աղբյուրն էր:** Ընտանիքն այնուհետև դիմել է Ստրասբուրգ՝ պնդելով, որ սեփականազրկման դիմաց իրենց ստացած փոխհատուցումն անհամարժեք է: Այս փաստարկը բավարարվել է Եվրոպական դատարանի կողմից, որը **քննադատել է ազգային իշխանություններին գույքի իրական արժեքի գնահատման** և նրանց իրական վնասի փոխհատուցման ապահովման **ձախողման** համար:

Սա միակ դեպքը չէ, և նմանատիպ շատ դեպքեր են հասել ՄԻԵԴ: Օսմանյան և Ամիրագյան ընտանիքի գործն ընտրվել է որպես առաջատար գործ Թեղուտ գյուղում գյուղատնտեսական նշանակության հողերի բռնագրավմանն առնչվող 8 գործերի շարքից: Ինչպես մանրամասն ներկայացված է Նախարարների կոմիտեին ուղղված երկու միջնորդություններում, ընտանիքներին վճարվել է ՄԻԵԴ-ի կողմից սահմանված արդարացի փոխհատուցումը: Սակայն **նման վիճակում գտնվող ընտանիքները, որոնք Ստրասբուրգում գործեր չեն ունեցել, ստիպված են եղել Վճռաբեկ դատարան դիմել՝** խնդրելով վերաբացել իրենց գործերը: Այս խնդրանքների արդյունքը պարզ չէ, քանի որ **սեփականության օտարման մասին օրենքը չի ենթարկվել որևէ բարեփոխման՝ կրկնվող խախտումներից խուսափելու նպատակով:**

,,

Կարող են լինել իրավիճակներ, երբ գույքի շուկայական արժեքին համարժեք փոխհատուցումը ...
չի համարվում համարժեք փոխհատուցում սեփականազրկման դիմաց ... հատկապես, եթե գույքը հանդիսանում է հիմնական, եթե ոչ միակ եկամտի աղբյուրը

(Օսմանյանն ու Ամիրագյանն ընդդեմ Հայաստանի, 2018 թվականի հոկտեմբերի 11, § 69)

Կարինե Ավետիսյան, **վերցված** Unsplash.com-ից

2019թ. գործողությունների ծրագրով, որը թարմացվել է 2020թ. իշխանությունները հայտնել են, որ տեղի են ունեցել խորհրդարանական լսումներ հասարակական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների միջև, որից հետո **կառավարությունն ընդունել է սեփականության օտարման մասին օրենքի լայնամասշտաբ բարեփոխման անհրաժեշտությունը**: Տեղեկանալով այս ամենին՝ ՆԿ-ն որոշեց փակել այս գործերով վերահսկողության գործընթացը՝ անհատական միջոցառումների մասով, միևնույն ժամանակ շարունակելով ուսումնասիրել ընդհանուր միջոցառումների հարցը:

Ինչպես ընդգծված է մի ՀԿ-ի հաղորդագրություններից մեկում, «Սեփականության օտարման մասին» օրենքը դեռևս չունի բավարար երաշխիքներ գույքի սեփականատերերի համար: Բացի այն ընտանիքներից, որոնք շահել են գործերը Ստրասբուրգում, **նույն տարածքում ապրող յս 43 ընտանիքի հողեր ենթարկվել են բռնագրավման**: **Նրանք չեն ունեցել ՄԻԵԴ դիմելու համար միջոցներ կամ հնարավորություն, սակայն պնդել են, որ իրենց դեպքում յս կատարվել է սեփականության իրավունքի նույն խախտումը:**

Լուծում գտնելու անհրաժեշտությունը, որը հաշվի կառնի այսպիսի ընտանիքների իրավիճակը, ցույց է տալիս, որ այս խմբի գործերի կատարման գործընթացը Ստրասբուրգ հասած գործերի սեփականազրկման հատուկ առարկայի շրջանակներից դուրս է:

ՀԿ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Կատարման գործընթացում ՀԿ-ները կարևոր դերակատարում ունեն: Իրենց գրավոր միջնորդությունների և ոչ պաշտոնական ճեպազրույցների միջոցով նրանք կարողանում են լույս սփռել տվյալ խմբի գործերի կատարման գործընթացի իրական վիճակի վրա և կանխել դրանց վաղաժամ փակումը:

Սրանք այն ՀԿ-ներն են, որոնք ներգրավվել են Հայաստանին վերաբերող ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացում: Նրանց հետ կարելի է կապ հաստատել՝ կոնկրետ դեպքերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար:

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ

ՀՀ,Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 59

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան
info@osi.am

Հայաստանի Հելսինկյան կոմիտե
ՀՀ, Երևան, 3a Պուշկինի փողոց **info@armhels.com**

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների
ՀՀ, Երևան, Ամիրյան 11
info@prwb.am

ՀՂՈՒՄՆԵՐ

Խաղաղ ցույցերի իրավունքի պաշտպանությանը վերաբերող գործերի խմբի մասով («Մուշեղ Սաղաթելյան» գործերի խումբ)

Իշխանությունների 2020թ. ապրիլի 2-ի գործողությունների ծրագիրը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2020)301E>

Իշխանությունների 2019թ. հոկտեմբերի 4-ի գործողությունների զեկույցը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2020)238E>

Ալիսա Չիլինգարյան (Iravaban.net) Մուշեղ Սաղաթելյանն այն մարդն է, ումից վրեժխնդիր եղավ Ռոբերտ Քոչարյանը (2019 թվականի օգոստոսի 17), հասանելի է՝ <https://iravaban.net/en/246580.html>

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի, Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ի, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի, Հայաստանի Հելսինկյան կոմիտեի կողմից 2020 թվականի ապրիլի 21-ի հաղորդագրությունը և իշխանությունների 2020 թվականի մայիսի 5-ի պատասխանը, որոնք հասանելի են՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH-DD(2020)401E> Խոշտանգումների դեմ կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի 2017 թվականի հունվարի 26-ի չորրորդ պարբերական գնահատման վերաբերյալ, որը հասանելի է՝
<https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CAT/C/ARM/CO/4&Lang=En>

Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2019-2022թթ. Ծրագիրը, որը հասանելի է՝ <https://search.coe.int/cm/Pages/result_details.aspx?ObjectId=090000168090762f>

Նախարարների կոմիտեի 2020թ. հունիսի 4-ի որոշումը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=CM/Del/Dec(2020)1377/H46-2E>

Նախարարների կոմիտեի 2016թ. դեկտեմբերի 8-ի որոշումը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/eng?i=CM/Del/Dec(2016)1273/H46-2>

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ փոփոխություններ իրականացնելու նախագիծը, 2015թ. հոկտեմբերի 5-ին Հայաստանի Ազգային ժողովի կողմից ընդունված և 2015 թվականի դեկտեմբերի 6-ի համաժողովրդական հանրաքվեի ժամանակ ներկայացվելիք տեքստը, որը հասանելի է՝ <https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL- REF(2015)042-e>

2015 թվականի հոկտեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների նախագծի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից հաստատված առաջին կարծիքը, որը հասանելի է՝ <https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2015)037-e>

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման եվրոպական կոմիտեի 2016 թվականի նոյեմբերի 22-ի Հայաստան կատարած այցի մասին զեկույց ՀՀ կառավարությանը, որը հասանելի է՝ <https://rm.coe.int/16806bf46f>

Մարդու իրավունքների պաշտպանություն («Հյուման Ռայթս Վոթչ»), Ժողովրդավարություն՝ ամուր հիմքի վրա. Հայաստանի 2008 թվականի վիճահարույց նախագահական ընտրությունները, հետընտրական բռնությունները և հաշվետվողականության միակողմանի հետապնդումը (2009 թվականի փետրվարի 25), որոնք հասանելի են՝ <https://www.hrw.org/report/2009/02/25/democracy-rocky-ground/armenias-disputed-2008- presidential-election-post-election>

JAMnews, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը երեք գործերով որոշումներ կայացրեց ընդդեմ Հայաստանի (2018 թվականի սեպտեմբերի 21), հասանելի է՝ <https://jam-news.net/european-court-of-human-rights-rules-against-armenia-in-three- cases/>

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի գործով (բաժանմունք I), 2018 թվականի սեպտեմբերի 20, գանգատ թիվ 23086/08, հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001- 186114>

ԵԱՀԿ, 2008թ. փետրվարի 19-ին Հայաստանում նախագահական ընտրությունների վերաբերյալ վերջնական զեկույցը (2008 թվականի մայիսի 30), որը հասանելի է՝ <https://www.osce.org/odihr/elections/armenia/32115>
Ozen^ Bilgili (Կատարման եվրոպական ցանց) Հայաստանում ընդդիմության կողմից կազմակերպված ցույցերի դեմ ճնշումները (2019 թվականի դեկտեմբերի 5), հասանելի է՝ <http://www.einnetwork.org/blog-general/2019/12/5/crackdowns-on- opposition-protests-in-armenia>

Քաղաքացիական հասարակության տարածքի պաշտպանությունը. միավորումների, հավաքների և խոսքի ազատության ամրապնդումը և ԵՄ-ում իրավունքների պաշտպանության իրավունքը, Եվրոպական խորհրդարանի հանձնարարությամբ իրականացված ուսումնասիրություն, 2020թ. հոկտեմբեր, հասանելի է՝
<https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2020/659660/IPOL_STU(2020)659660_EN.pd>
Խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքի մասին Հատուկ զեկուցողի 2019 թվականի մայիսի 13-ի զեկույցը, որը հասանելի է՝ <https://undocs.org/A/HRC/41/41/ADD.4>

Հայաստանի առնչությամբ Համընդհանուր պարբերական գնահատման վերաբերյալ 2020 թվականի մարտի 18-ին աշխատանքային խմբի կողմից ներկայացված զեկույցը, որը հասանելի է՝ <https ://undocs.org/A/HRC/44/10>
Ռոման Կիսելյով (Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոն) «Մուշեղ Սաղաթելյանն ընդդեմ Հայաստանի» գործով ամփոփագիր (2018 թվականի սեպտեմբերի 20), որը հասանելի է՝ <https://ehrac.org.uk/resources/mushegh-saghatelyan-v- armenia/>
Վիճակագրական տվյալների մասով
HUDOC-EXEC տվյալների շտեմարանից վերցված վիճակագրական տվյալներ <https://hudoc.exec.coe.int/ENG# {%22EXECDocumentTypeCollection%22:[%22CEC%22]}>, որոնք վավերական են եղել 2020 թվականի նոյեմբերի 27-ի դրությամբ
Հայաստանի վերաբերյալ փաստաթղթերի ամփոփաթերթ, որը հասանելի է՝
<https://rm.coe.int/168070973c>
ԿԵՑ երկրների էջը, որը հասանելի է՝ <http://www.einnetwork.org/armenia-echr>
Վիճակագրական տվյալների վերաբերյալ ԿԵՑ բացատրությունը, որը հասանելի է՝
<http://www.einnetwork.org/about-our-data>
Կալանավորների՝ պատշաճ բժշկական օգնություն ստանալու իրավունքին վերաբերող գործերի խմբի մասով («Հարությունյան» գործերի խումբ)
Իշխանությունների 2015թ. ապրիլի 16-ի գործողությունների ծրագիրը, որը հասանելի է՝
<http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2015)435E>
Իշխանությունների 2019թ. հունվարի 18-ի գործողությունների ծրագիրը, որը հասանելի է՝
<http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2019)75E>
Իշխանությունների 2017թ. հոկտեմբերի 9-ի գործողությունների ծրագիրը, որը հասանելի է՝
<http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2017)1150E>
Իշխանությունների 2020թ. սեպտեմբերի 29-ի գործողությունների զեկույցը, որը հասանելի է՝
<http://hudoc.exec.coe.int/ENG? i=DH-DD(2020)745E>
Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիա, Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի (2010 թվականի հունիսի 15), հասանելի է՝ <https://www.apt.ch/en/news_on_prevention/ashot-harutyunyan-v-armenia>
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և Սպիտակի Հելսինկյան խմբի 2013 թվականի սեպտեմբերի 25-ի հաղորդագրությունը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH-DD(2013)1118E>
Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի և Սպիտակի Հելսինկյան խմբի 2020 թվականի հունվարի 21-ի հաղորդագրությունը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH-DD(2020)1111E>

Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի հունվարի 21-ի հաղորդագրությունը և իշխանությունների պատասխանը, հասանելի են՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH-DD(2019)120E>

Խոշտանգումների դեմ կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի 2012թ. հուլիսի 6-ի զեկույցի վերաբերյալ, որը հասանելի է՝ <https://atlas-of-torture.org/en/document/yqy1kqins1elemh55y4lsor?page=1>

Մարդու իրավունքների կոմիտեի եզրափակիչ դիտարկումները Հայաստանի 2012թ. օգոստոսի 31-ի զեկույցի վերաբերյալ, որը հասանելի է՝ <https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CCPR/C/ARM/CO/2&Lang=En>

Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար իրականացվող գործողությունների 2015-2018թթ. ծրագիրը, որը հասանելի է՝ <https://rm.coe.int/1680471d82> Եվրոպայի խորհուրդ, 2019 Նորություններ, ԵԽ ԽԿԿ-ի (Խոշտանգումների կանխարգելման կոմիտե) այցելությունները Հայաստան (2019 թվականի դեկտեմբերի 16), հասանելի է՝ <https://www.coe.int/en/web/cpt/-/the-cpt-visits-armenia>

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը «Աշոտ Հարությունյանն ընդդեմ Հայաստանի» գործով (բաժանմունք III), 2010 թվականի հունիսի 15, հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng?i=001-99403>

Տարածաշրջանային նախագիծ. Դաժան վերաբերմունքի և անպատժելիության դեմ պայքարի ուժեղացում, Եվրոպայի խորհրդի և Եվրամիության համատեղ ծրագիր, հասանելի է՝ <https://www.coe.int/en/web/national- implementation/projects-by-geographical-area/regional-illtreatment2>

Խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման կոմիտեի (ԽԿԿ) զեկույցը ՀՀ կառավարությանը 2015 թվականի հոկտեմբերի 5-ից 15-ը և 2016թ. նոյեմբերի 22-ին կատարած այցերի վերաբերյալ, հասանելի է՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806bf46f>

Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդում բանտերում (PGG), Եվրոպայի խորհրդի և Եվրամիության համատեղ ծրագիր, հասանելի է՝ <https://www.coe.int/en/web/criminal-law-coop/pgg- armenia>

Սեփականության իրավունքի պաշտպանությանը վերաբերող գործերի խմբի մասով («Օսմանյան ֆ Ամիրագյան» գործերի խումբ)

Իշխանությունների 2019թ. հոկտեմբերի 17-ի գործողությունների ծրագիրը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2019)1196E>

Իշխանությունների 2020թ. մայիսի 6-ի գործողությունների ծրագիրը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2020)424E>

Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի, Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ-ի, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի, «Թրանսփարենսի ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի, Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի 2020 թվականի սեպտեմբերի 18-ի հաղորդագրությունը

Դիմումատուի 2019 թվականի հուլիսի 15-ի հաղորդագրությունը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2019)838E>

Դիմումատուի 2019 թվականի օգոստոսի 8-ի հաղորդագրությունը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2019)884E>

Նախարարների կոմիտեի 2019թ. մարտի 4-ի որոշումը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=CM/Del/Dec(2019)1340/H46-1E>

Նախարարների կոմիտեի 2017թ. դեկտեմբերի 7-ի որոշումը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=CM/Del/Dec(2017)1302/H46-2E>

Հայաստանում Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Եվրոպայի խորհրդի նախագիծ, որը հասանելի է՝ <https://rm.coe.int/16806f184a>

Հովհաննիսյան Վարազդատ, ՀՀ-ում սեփականության օտարման պրակտիկայի հիմնախնդիրներն Անշարժ գույքի եվրոպական հասարակության 21-րդ ամենամյա համաժողովում: ԱԳԵՀ. Համաժողով: Բուխարեստ, Ռումինիա, 2014թ., հասանելի է՝ <https://eres.architexturez.net/doc/oai-eres-id-eres2014-211>

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը «Օսմանյանն ու Ամիրագյանն ընդդեմ Հայաստանի» գործով (բաժանմունք I), 2018 թվականի հոկտեմբերի 11, գանգատ թիվ 71306/11, հասանելի է՝ <http://hudoc.echr.coe.int/eng? i=001-186669>

Քրիստինե Աղալարյան, Եվրոպական դատարանը վճիռ կայացրեց ընդդեմ Հայաստանի՝ Թեղուտի հանքավայրին առնչվող վեց գործերով (2019թ. փետրվարի 14), հասանելի է՝ <https://hetq.am/en/article/100901>

Համաշխարհային բանկի զեկույցը Հայաստանի վերաբերյալ. Հանքարդյունաբերության ոլորտի կայունության 2016 թվականի ապրիլի ռազմավարական գնահատումը, որը հասանելի է՝ <http://documents1.worldbank.org/curated/en/289051468186845846/pdf/106237- WP-P155900-PUBLIC.pdf>

Նախարարների կոմիտեի 2019 թվականի նոյեմբերի 13-ի որոշումը Հայաստանի դեմ յոթ գործերով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման մասին, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=001-198723>

Իշխանությունների 2016թ. հունիսի 8-ի գործողությունների վերանայված ծրագիրը, որը հասանելի է՝ <http://hudoc.exec.coe.int/ENG?i=DH- DD(2016)746E>

Բոլոր հղումները վավեր են 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ:



ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ՀԱՅԱՍՏԱՆ

Կատարման եվրոպական ցանց
2021 թվականի հունվար